ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ 010 54 03 26, ֆաքս՝ 010 54 06 13
Էլ.փոստ՝ scws@scws.am
Վեբ կայք՝ scws.am

« __» _____ 2024թ.

N 03/17/6189-2024

«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ
(ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան,
Նալբանդյան 1-ին նրբ. տուն 1, հեռ. 098110083
էլ. փոստ artarsllc@mail.ru)

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Աթաբեկյան

Ջրային կոմիտեի և «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի մարտի 18-ին կնքվել է ՋԿ-ԲՄԱԾՁԲ-22/4-Ա-3 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) (12.02.2024թ. կնքված Համաձայնագիր N3), որի շրջանակում Ընկերությունը պետք է կատարեր գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - Գետիկ գետի հունի մաքրում շուրջ 1600 մ և ափերի ամրացում շուրջ 150 մ Ճամբարակ խոշորացված համայնքի Մարտունի գյուղի տարածքում: Պայմանագրով նախատեսված աշխատանքները սույն թվականի սեպտեմբերի 17-ի դրությամբ չեն ավարտվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 22.11.2024թ. «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն տեղեկացրել է քաղաքաշինության բնագավառում գործունեության իրականացման լիցենզիայի բացակայության մասին և այն, որ գնման արդյունքում պայմանագրի կողմ հանդիսացող քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված սուբյեկտները՝ 2022 թվականի դեկտեմբերի 16-ի «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-431-Ն օրենքի համաձայն մինչև 2024 թվականի սեպտեմբերի 17-ը պետք է ստանան համապատասխան դասի լիցենզիա և մինչ այդ գործող լիցենզիայի (լիցենզիաներ) և ներդիրի (ներդիրներ) գործողությունը համարվելու է դադարեցված, նույնիսկ այն պարագայում, երբ ձեռք բերված աշխատանքների կամ ծառայությունների պայմանագրային ժամկետները լրանում են 2024 թվականի սեպտեմբերի 17-

Կատարող՝ Ա. Սարգսյան
գնումների վարչություն
Հեռ.՝ 010 540229

ից հետո, ինչպես նաև այն փաստը, որ նշված աշխատանքները սույն թվականի սեպտեմբերի 17-ի դրությամբ չեն կատարվել, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետը, Ջրային կոմիտեն 2024 թվականի դեկտեմբերի 13-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 354 000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և 1 464 711 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), ինչպես նաև Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 7 080 000 ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 11 918 229 ՀՀ դրամ, որն «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (Երաշխիք տվող անձ) կողմից անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում ենք սահմանված ժամկետում, այն է սույն թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ՝ վերը նշված աշխատանքների կատարման համար Երաշխիք տվող անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները վճարվելու դեպքում Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը Կենտրոնական գանձապետարանում լիազոր մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը անհրաժեշտ է ներկայացնել Ջրային կոմիտե:

Պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում Ջրային կոմիտեն կձեռնարկի միջոցներ դրանք գանձելու ուղղությամբ:

Recoverable Signature

X

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN ARTAK 1403750092

Հարգանքով՝ ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ